## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔ

05.05.2015

2015 թվականի ապրիլի 9-ին Կոտայքի մարզի Նոր գյուղ համայնքի արևելյան հատվածում հոսող սելավատարի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ջրածածկման գոտում են հայտնվել մի շարք հողատարածքներ և շինություններ:

Հիշյալ հողատարածքների և շինությունների սեփականատերերին հանդիպելու նպատակով Նոր գյուղ համայնք է այցելել Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանը, տեղում ծանոթացել ստեղծված իրավիճակին և պատրաստակամություն հայտնել աջակցել համայնքի՝ տուժած բնակիչներին:

Կոտայքի մարզպետին հանդիպման ընթացքում ներկայացվել են սելավատարի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով հասցված վնասների ընդհանուր նկարագրերը, ինչպես նաև արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը գնահատող համայնքային հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքների ուղղությունները:

Այնուհետև համայնքային հանձնաժողովի կողմից կազմվել են համապատասխան ակտեր և ներկայացվել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասը գնահատող մարզային հանձնաժողով: Ակտերում արձանագրված վնասների չափերի շրջանակներում Կոտայքի մարզպետի որոշմամբ բնակիչներին հատկացվել է դրամական օգնություն:

ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Գուլոյանի հանձնարարությամբ Նոր գյուղ համայնք են այցելել մարզպետարանի աշխատակիցներ և սելավատարի վարարումից տուժած ընտանիքներին փոխանցել համապատասխան ֆինանսական աջակցությունը: